ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄԻԱՅՆ ՔԵԶ ՄՕՏ

Դու ասացիր.
«Ինձ մօտ եկէք դուք բոլորդ,
Որ յոգնած էք ու ծանրաբեռն,
Եւ ես հանգիստ պիտի տամ ձեզ»:
Այո՛, Տէ՛ր իմ,
Միայն քեզ մօտ ենք գնալու,
Այլ տեղ չունենք մենք օթեւան,
Այս աշխարհը ոչ մի մարդու
Պատսպարան չէ յաւիտեան:

Երբ ժամն հնչի վերջին շնչի,
Թող որ պրծնենք չար դեւերի
Ճիրաններից զարհուրելի
Եւ ընթանանք սիրակարօտ,
Վառ լոյսերի յաճախումով
Ուղիղ քեզ մօտ, միայն քեզ մօտ:

Բայց չըլինի թէ մենք դառնանք
Ժանտ մեղքերով ծանրաբեռնուած
Եւ հաւատով ունայնացած,
Քո հանգստին երանական
Միշտ անպատրաստ ու անարժան:

Զի հանգիստըդ անմահական
Պիտի բաժին լինի նրան,
Որ աշխարհում այս անիրաւ
Զրկուածներին կանգնեց պաշտպան,
Եւ չարութեան դէմ ծառացաւ
Խիզախումով ասպետական:

Ուժ տո՛ւր, ո՛վ Տէր,
Որ այժմուանից միշտ անվեհեր
Հոգով զինուած լինենք յաւէտ՝
Ընդդէմ անարգ եւ նենգ մարդկանց
Գրրոհին չար ու մահաբեր:
Պայքարը մեր թող միշտ լինի
Հերոսական ու անձնուէր,
Որից յետոյ անպարտ սրտով,
Վաստակաշատ ու յոգնաբեկ,
Պիտի գընանք միշտ ապահով
Վեհասքլաց ճամբով անթեմ,
Ու ճեղքելով ամպեր թխպոտ
Պիտի հասնենք արտորանքով
Ուղիղ քեզ մօտ, միայն քեզ մօտ:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@